ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N <<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/31-1>>

ք.Երևան «10» հունիսի 2019 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Շինհայ-ՊՈ> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ն. Պողոսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Շինարարների 2,4 շենքերի բակային տարածքի հիմնանորոգման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո **և կատարման ժամկետը է սահմանվում է՝ 2019թ սեպտեմբերի 30-ը:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **365 օրացուցային օր**: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝

վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **14367600 (տասչորս միլիոն երեք հարյուր վաթսունյոթ հազար վեց հարյուր)** ՀՀ դրամ, որից **2394600 (երկու միլիոն երեք հարյուր իննսունչորս հազար վեց հարյուր)** ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը,

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Սույն պայմանագրով նախատեսնված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	**Կապալառու**
Երևանի քաղաքապետարան	«Շինհայ ՊՈ» ՍՊԸ
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1	Ք. Երևան, Բաշինջաղյան 178/2
Կենտրոնական գանձապետարան	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Կիևյան մ/ճ
Հ/Հ 900052473429	Հ/Հ 11500716795667
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 01239894
Է. Կիրակոսյան ----------	Ն. Պողոսյան ----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
<< 10 > հունիսի 2019 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ **<<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/31-1>>** *գնման պայմանագրի*

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Շինարարների 2,4 շենքերի
բակային տարածքի հիմնանորոգում

հազ.դր.

NN	Աշխատանքների անվանումը	Չափի միավոր	Քանակ	Միավոր ընդ.արժեք հազ.դրամ	Ընդհանուր արժեք հազ. դրամ
1	3	4	5	16	17
	Ոռոգման աշխատանքներ				
1	Խրամուղու քանդում ձեռքով 3-րդ կարգի գրունտներում	100մ³	0.20	162.960	32.592
2	Ա/բետոնե ծածկույթի b=միջ=8սմ քանդում	100մ³	0.60	305.285	183.171
3	Բարձում ա/մ վրա և տեղափոխում 13կմ	տն	1.44	2.367	3.408
4	Հակադարձ լիցք տեղական հանույթից ձեռքով	100 մ³	0.17	68.147	11.585
5	Գրունտի տոփանում պնեվմոտոփանիչներով	100 մ³	0.17	17.328	2.946
6	Ավելորդ գրունտի բարձում և տեղափո խում թափոնատեղ	տն	5.40	2.367	12.782
7	Միջնահատիկ ա/բ ծածկույթ b= 6սմ	100 մ²	0.07	383.629	26.854
8	Բետոնե նախապատրաստական շերտ B-7,5բետոնից	մ³	0.30	24.214	7.264
9	Հորերի պատրաստում B-12,5բետոնից F-150 W4	մ³	2.10	69.824	146.630
10	Խճային նախապատ րաստական շերտ 10սմ	մ³	0.5	7.973	3.588
11	Պողպատե 25 x 2,5 խողովակների վերգետնյա տեղադրում	գմ	2.80	1.044	2.923
12	Պողպատե 76 x 4 խողովակների վերգետնյա տեղադրում	գմ	93.00	2.626	244.218
13	Պողպատե 51 x 3,5 խողովակների վերգետնյա տեղադրում	գմ	48.00	2.007	96.336
14	Չուգունե սողնակների տեղադրում Φ-80մմ	հատ	1.00	27.167	27.167
15	Չուգունե սողնակների տեղադրում Φ-150մմ	հատ	1.00	51.178	51.178
16	Չուգունե սողնակների տեղադրում Φ-50մմ	հատ	1.00	18.480	18.480

17	Ծորակների տեղադրում Φ-25մմ	հատ	7.00	7.076	49.532
18	Պողպատե Φ-50մմ խողովակների նորմալ հիդրոմեկուսացում	գմ	48.00	0.565	27.110
19	Պողպատե Φ-76մմ խողովակների մորմալ հիդրոմեկուսացում	գմ	93.00	0.662	61.566
20	Պողպատե խողովակ ների ներկում 2անգամ	100 մ^2	0.028	59.660	1.670
21	Մետաղական անկյու նակներից և թիթեղից հորերի կափարիչներ /պատրաստումով/	տն	0.062	557.242	34.549
22	Ծխնի	հատ	4.00	0.293	1.172
23	Կախովի կողպեք	հատ	1.00	1.466	1.466
24	Խարսխային հեղյուս Φ-20 Ա-3-ից ամրանից	տն	0.008	339.667	2.717
25	մետաղական կափարիչների ներկում	մ^2	2.00	0.847	1.694
26	Մետաղական խողովակ ներին կցաշուրթերի զոդում Φ-150մմ	հատ	2.00	2.271	4.542
27	Մետաղական խողովակ ներին կցաշուրթերիզոդում Φ-80մմ	հատ	2.00	1.182	2.364
28	Մետաղական խողովակ ներին կցաշուրթերի զոդում Φ-50մմ	հատ	2.00	0.862	1.724
29	Միացում գործող ջրագծին	տեղ	1.00	3.411	3.411
30	Ոռոգման ցանցի փորձարկում	100 մ	1.44	5.673	8.169
	Շինարարական աշխատանքներ				
	Ապամոնտաժման աշխատանքներ				
1	Գոյություն ունեցող մետաղական 4 տեղանոց կարուսելի ապամոնտաժում	տն	0.20	32.823	6.565
2	Գոյություն ունեցող սալիկների քանդում	100մ^2	1.15	42.940	49.381
3	Բետոնե աստիճանների քանդում	մ^3	0.053	33.805	1.792
4	Գոյություն ունեցող մետաղական բազրիք ների ապամոնտաժում 40,1մ Н-1մ	տն	0.41	37.485	15.369
5	Բետոնե եզրաքարերի 150x300մմ չափերի ապամոնտաժում	գ/մ	365.00	0.651	237.615
6	Բետոնե հիմքերի քանդում	մ^3	21.50	33.805	726.808
	Բարձումա/մ վրա և տեղափոխում 13կմ	տն	103.60	2.367	245.221
	Բարեկարգման աշխատանքներ				
1	Միջնահատիկ ա/բ շերտի քանդում միջ. 8սմ	100մ^3	0.016	122.368	1.958
2	Միջնահատիկ ա/բ ծածկույթ b = 8սմ հաստությամբ	100 մ^2	0.203	506.911	102.903
3	Խճային նախապատրաստական շերտ 10սմ տոփանումով, բետոնե հավաքովի եզրաքարերի տակ	մ^3	7.00	7.973	55.811

4	Բետոնե հավաքովի եզրաքարերի տեղադրում 150x300մմ չափ.	100գ/մ	2.02	517.945	1046.249
5	Խճային նախապատրաստական շերտ 10սմ տոփանումով, բետոնե հավաքովի եզրաքարերի տակ70x80մմ չափ.	մ³	3.20	7.973	25.514
6	Հավաքովի բետոնե եզրաքարեր70x80մմ չափերի	100գ/մ	2.69	116.880	314.407
	Մետաղական բազրիքներ H= 1.0մ				
1	Խրամուղու մշակում 3-րդ կարգի գրունտներում ձեռքով	100 մ³	0.006	162.960	0.978
2	Ավելորդ գրունտի բարձում և տեղափոխում թափոնատեղ13կմ	տն	1.10	2.366	2.603
3	Բետոնացում B-12,5 դասի բետոնով	մ³	0.60	30.653	18.392
4	Մետաղական ուղղանկյուն խողովակներից և թիթեղներից բազրիքների մոնտաժում պատրաստումով	տն	0.324	623.981	202.170
5	Մետաղական բազրիքների ներկում	100մ²	0.286	84.775	24.246
6	Խճային նախապատրաստական շերտ 10սմ տոփանումով	մ³	42.20	7.974	336.503
7	Միջնահատիկ ա/բ ծածկույթ b = 4սմ հաստությամբ	100 մ²	4.22	260.348	1098.669
	Սալիկապատ անցուղի				
1	Խճի նախապատրաս տական շերտ տոփանումով 4սմ	մ³	8.00	7.973	63.784
2	Սալիկապատում բետոնե սալիկներով 400x400x30մմ	100մ²	1.59	393.953	626.385
3	Հարթեցնող շերտ բետոնե սալերի տակ 4սմ հաստութ.չոր ց/ա շաղախով	100մ²	1.59	126.474	201.094
	Հենապատի վերանորոգում և հարդարում				
1	Հենապատի վերանորոգում ց/ավազի շաղախով 3,5սմ հաստ.	մ²	3.70	2.609	9.653
	Բետոնե աստիճանների երեսպատում բազալտե սալիկներով				
1	Աստիճանների երեսպատում բազալտե սալիկներով 3սմ հաստ.	մ²	4.70	15.841	74.453
	Նստարանների տեղադրում 14հատ				
1	Փոսորակի փորում 3-րդ կարգի գրունտներում ձեռքով	100 մ³	0.014	303.698	4.252
2	Ավելորդ գրունտի բարձում և տեղափ խում թափոնատեղ13կմ	տն	2.50	2.366	5.915
3	Բետոնացում B-7,5 դասի բետոնով	մ³	0.70	29.027	20.319
4	Ամրան A - 500c	տն	0.034	304.610	10.357
5	Փայտե չորսուներով նստատեղեր 40x80մմ	մ³	0.70	132.650	92.855
6	Փայտյա նստարանների ներկում	100մ²	0.391	89.515	35.000
7	Նստարանների մետաղական կմախքի մոնտաժում /պատրաստումով/	տն	0.40	623.985	249.594

8	Մետաղական էլեմենտների յուղա ներկում 2անգամ	տն	0.40	11.481	4.592
	Աղբամանների տեղադրում 18հատ				
1	Փոսորակի փորում 3-րդ կարգի գրունտներում ձեռքով	100 մ³	0.011	303.698	3.341
2	Ավելորդ գրունտի բարձում և տեղափոխում թափոնատեղ13կմ	տն	1.90	2.366	4.495
3	Բետոնացում B-12,5 դասի բետոնով	մ³	0.36	30.653	11.035
4	Ամրան A - 500c	տն	0.021	304.609	6.397
5	Խճային նախապատրաստական շերտ 10սմ տոփանումով	մ³	0.144	7.973	1.148
6	Մետաղական թիթեղներից և ուղղանկյուն խողովակներից աղբամանի պատրաստում	տն	0.255	632.752	161.352
	Զրուցատաղավարների տեղադրում 1հատ				
1	Փոսորակի փորում 3-րդ կարգի գրունտներում ձեռքով	100 մ³	0.026	303.698	7.896
2	Հակադարձ լիցք տեղական հանույթից ձեռքով	100 մ³	0.016	68.147	1.090
3	Ավելորդ գրունտի բարձում և տեղափոխում թափոնատեղ13կմ	տն	1.80	2.366	4.259
4	Բետոնացում B-12,5 դասի բետոնով	մ³	0.50	30.653	15.327
5	Ամրան A - 500c	տն	0.003	304.609	0.914
6	Խճային նախապատրաստական շերտ 10սմ տոփանումով	մ³	0.20	7.973	1.595
7	Մետաղ.կմաղքի մոնտաժում ուղղանկյուն խողովակներից և թի թեղներից պատրաս-ով	տն	0.305	653.845	199.423
8	Մետաղակ.էլեմենտների ներկում 2 անգամ	տն	0.305	11.481	3.502
9	Փայտե չորսունների տեղադրում L-2400 և 60x60 փայտյա խցաններով	մ³	0.112	438.697	49.134
	Սղարան 1հատ				
1	Փոսորակի փորում 3-րդ կարգի գրունտներում ձեռքով	100 մ³	0.02	303.698	6.074
2	Ավելորդ գրունտի բարձում և տեղափո խում թափոնատեղ13կմ	տն	3.60	2.366	8.518
3	Բետոնացում B-12,5 դասի բետոնով	մ³	0.50	30.653	15.449
4	Ամրան A - 500c	տն	0.003	304.609	0.914
5	Խճային նախապատրաստական շերտ 10սմ տոփանումով	մ³	0.150	7.973	1.196
6	Մետաղ.կմաղքի մոնտաժում ուղղանկյուն խողովակներից և թի թեղներից պատրաս-ով	տն	0.172	653.845	112.461
7	Մետաղակ.էլեմենտների ներկում 2 անգամ	տն	0.172	11.481	1.975
8	Սևահողի լիցք կանաչ գոտիներում 5սմ հաստութ.	100մ²	13.20	131.643	1737.688
9	Սիզամարգերի ցանում	100մ²	13.20	20.698	273.214
10	Կարմիր ավազի շերտի փռում 50մմ հաստ	մ³	4.00	2.583	10.332

	Էլեկտրականություն				
1	Արտաքին լուսավորութ. լուսատու ԺԿՈՒ-150 ԴՆաՏ-150 լամպով	հատ	17.00	31.423	534.191
2	Միաճյուղ բարձակ Փ-48x3,5 լ-1,5մ	հատ	17.00	12.060	205.020
3	Պողպատ թերթավոր 300x300x5մմ	կգ	35.00	0.473	16.555
4	Ամրան A-3-րդ դասի	կգ	8.40	0.305	2.562
5	Բաժանման տուփ 200x200x100մմ	հատ	17.00	1.585	26.945
6	Մալուխ ալյումինե ԱՎՎԳ 4x16մմ^2	մ	425.00	1.104	469.200
7	Հաղորդալար ալյումինե ԱՎՎԳ 2x2,5մմ^2	մ	85.00	0.296	25.160
8	Մետաղական հենասյուն Փ-76x3,5մմ խողովակից լ-4մ	հատ	17.00	20.023	340.391
9	Հաշվիչ եռաֆազ երկսակագնային380վ, 30Ա	հատ	1.00	54.975	54.975
10	Արտաքին լուսավորության պահարան 3x160 կոնտակտով	կ-տ	1.00	205.249	205.249
11	Ավտոմատանջատիչ 100Ա	հատ	1.00	12.239	12.239
12	Ցցիկ Շ-1Բ-Կ-25	հատ	1.00	0.293	0.293
13	Մետաղական խողո վակ Փ-48x3,5	մ	3.00	1.339	4.017
14	Լայնակ անկյունակից63x63x5 L-0,4	հատ	1.00	1.807	1.807
15	Ցերեկային/գիշերային լուսավորության ցանցիժամանակի ռելե	հատ	1.00	13.987	13.987
16	Ճոպան Փ-5մմ	մ	250.00	0.269	67.250
17	Ճոպանի սեղմակ	հատ	250.00	0.146	36.500
18	Խողովակ վինիպլաստե Փ-50մմ	մ	170.00	0.413	70.210
19	Հենասյուների ներկում 2անգամ	100մ^2	0.170	59.651	10.141
20	Խրամուղու քանդում4-րդ կարգիգրունտներում	100մ^3	0.273	287.402	78.461
21	Փոսորակի քանդում 4-րդ կարգի գրունտներում	100մ^3	0.026	545.176	14.175
22	Գրունտի ետլիցք	100մ^3	0.273	83.258	22.729
23	Ավելորդ գրունտի բարձում և տեղափոխում թափոնատեղ 13կմ	տն	6.30	2.502	15.763
24	Ավազի շերտ	մ^3	3.40	3.040	10.336

25	Բետոնե հիմք B-15 դասի բետոնից	մ³	2.60	36.489	94.871
26	Խողովակ «գոֆրե»	մ³	34.00	0.501	17.034
	ԸՆԴԱՄԵՆԸ				11973.000
	ԱԱՀ 20%				2394.600
	ԸՆԴԱՄԵՆԸ				14367.600

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900052473429
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ----------
(ստորագրություն)
Կ. Տ.

Կապալառու
«Շինհայ ՊՈ» ՍՊԸ
Ք. Երևան, Բաշինջաղյան 178/2
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Կիևյան մ/ճ
Հ/Հ 11500716795667
ՀՎՀՀ 01239894

Ն. Պողոսյան ----------
(ստորագրություն)
Կ. Տ

Հավելված թիվ 2
<<10> հունիսի 2019 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/31-1>> գնման պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Շինարարների 2,4 շենքերի բակային տարածքի **հիմնանորոգման »**
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	**Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի** Շինարարների 2,4 շենքերի բակային տարածքի հիմնանորոգում	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	30.09.2019թ
	ԸՆԴԱՄԵՆԸ		

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900052473429
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ----------
*ստորագրություն
Կ.Տ

Կապալառու
«Շինհայ ՊՈ» ՍՊԸ
Ք. Երևան, Բաշինջաղյան 178/2
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Կիևյան մ/ճ
Հ/Հ 11500716795667
ՀՎՀՀ 01239894

Ն. Պողոսյան ----------
*ստորագրություն
Կ.Տ

Հավելված N 3
<<10> հունիսի 2019 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ **<<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/31-1>>** *գնման պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի										
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների. այդ թվում**							
	45611300		հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1		**Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի** Շինարարների 2,4 շենքերի բակային տարածքի հիմնանորոգում	13 985 000	14 367 600	14 367 600	14 367 600	14 367 600	14 367 600	14 367 600	14 367 600

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900052473429
ՀՎՀՀ 02593106

Է. Կիրակոսյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

Կապալառու
«Շինհայ ՊՈ» ՍՊԸ
Ք. Երևան, Բաշինջաղյան 178/2
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Կիևյան մ/ճ
Հ/Հ 11500716795667
ՀՎՀՀ 01239894

Ն. Պողոսյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 4
<<10> հունիսի 2019 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ **<<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/31-1>>** *գնման պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
<<10> հունիսի 2019 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ **<<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/31-1>>** *գնման պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ *«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/31-1»*
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան « 10 » հունիսի 2019 թ.**

<<Շինհայ-ՊՈ>>, ՍՊԸ-ի դեմս Ընկերության տնօրեն՝ <<Ն. Պողոսյանի, անձնա. ԱՀ 0278897 0508650 տրված 30.10.2007թ 012 կողմից>>, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է _____Երևանի քաղաքապետարանի_____* (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից
պատվիրատուի անվանումը

կազմակերպված՝ __"ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/31»_____* ծածկագրով գնման ընթացակարգին:
ընթացակարգի ծածկագիրը

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի /այսուհետ՝ Պահանջագիր/ ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեֆորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև 15/10/2020 ** (Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան, իսկ պայմանագրով երաշխիքային ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ երաշխիքային ժամկետի ավարտին հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ):

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Կապալառու

«Շինհայ ՊՈ» ՍՊԸ
Ք. Երևան, Բաշինջաղյան 178/2
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Կիևյան մ/ճ
Հ/Հ 1150071679667
ՀՎՀՀ 01239894

Ն. Պողոսյան
ստորագրություն

Կ.Տ

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ**[1]

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___ թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ «Շինհայ ՊՈ» ՍՊԸ

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Կիևյան մ/ճ

6. Վճարողի հաշվի համարը՝ Հ/Հ 11500716795667

7. Վճարողի ՀՎՀՀ՝ 01239894

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ Երևանի քաղաքապետարան

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ 02593108

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Կենտրոնական գանձապետարան

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900015211429

14.Գումարը (թվերով և բառերով)՝ 1436760/մեկ միլիոն չորս հարյուր երեսունվեց հազար յոթ հարյուր վաթսուն/

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ ADM

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/31-1

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.Տ.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ Ն. Պողոսյան /_____/ /_____/ 21.բ. Կ.Տ.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.Տ. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.Տ. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___ թ.

[1] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*